



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


Գ. Առ թիւ

Հրատարակութիւն Կենացքամիան Գրալամատունցի

# ԿՐՈՆԻԳԱՍՏԱԳԻՐՔ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒՄՅԱ ՈՒՍՈՒՄՆ

Հայոց Եկեղեցական-Ճշական ուսումնարանների համար



ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ


(Փոփոխած նոր ծրագրի համեմատ):

Ազյականական դիմումների համար բարեկարգ պահանջման

Գիւն է 25 լուս.

Թի ի ֆ լի Ա  
Ց Պ Ա Ր Ա Ն „Ա Ր Ո Ր “ Տ. Ն Ա Զ Ա Ր Ե Ա Ն Ի  
Հօտովիճ, Կո. և Բարեկանիճ, Վող, Խմելին:

1890



# ԿՐՈՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԻՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

281.6

Ա

## ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Փոփոխած նոր ծրագրի համեմատ):

ԱՋԽԱՑԱՄԻՐԵՑ

ԳԻՒՑ ՔԱՀԱՆԱՅ ԱՊԱՌԵԱՆՑ

Բ Հ 30b3



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՀԱՅՈՐԱ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ  
ՔՈՂՎԻՇ. ՊՐ. և ԲԱՐԵԱՄԻՇ. ԹՈՂ. ՊԵՂԻՐԵՑ:

1890

Digitized by srujanika@gmail.com

Дозволено цензуром, Тифлисъ, 1890 г., 18-го Января

Тип. „Ароръ“ Т. Я. Назаръянъ, ул. Головинъ, пр. и Варшавск. ул.

Ա Ռ Ա Յ Ա Յ

Ա Ր Ա Յ Ա Յ

Դ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Յ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

**Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.**

ՎԵՃԱՓԱԾՈՒՅԻ ԵՒ ՄՐԳԱԶՆԱԳՈՅՆՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Ա Ր Ա Յ Ա Յ

Դ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

Հ Ա Մ Ա Յ Ա Յ

## Յ Ա Ն Կ

ՄԱՍՆ Ա.

### ԵՐԳԵՐ ԵՒ ԾԱՐԱԿԱՆՆԵՐ

Օքհնութիւն հըեշտակաց.

Տաղ ջրօրհնեաց.

Տեսունընդառաջիւ.

Դարական ծաղկապարգիւ.

Մէծ ուզբաթիւ.

Մէծ շաբաթիւ.

Համբարձման.

Հոգեգալստեան.

Ա. Խաչի վերացման,

Ա. Թարգմանչաց.

Ա. Սանդուխտ կուսիւ.

Ա. Սահակ հայրապետիւ.

Ա. Վեռնդեանց քահանայից.

Ա. Գրիգոր Լուսաւորչիւ.

Շողակաթիւ ո. Եջմիածնիւ:

ՄԱՍՆ Բ.

## Տ Օ Ն Ե Ր

Քըստոսիւ պայծառակերպութիւնը:

Վերափոխումն ո. Աստուածածնիւ:

Ա. Թաղէոս և Բարդուղիմէոս.

Ա. Գրիգոր Լուսաւորիչ.

Հուխտամեան և Գայիանեան սուրբ կոյսեր.

Տօն սրբոյ էջմիածնի.

Տօն Վարդապայ սրբոյ խաչի.

Երևումն սուրբ խաչի.

Մեծն Ներսէս.

Ա. Սահակ և Մեսրոպ թարգմանիչներ.

Ա. Առողջեանք.

Ա. Վարդանանք.

### ՄԱՍՆ Գ.

Եկեղեցի կամ տաճար.

Տաճարի ձեր.

Տաճարի մատերը.

Եկեղեցական անօթներ.

Եկեղեցական գգեստներ և զարգեր.

Եկեղեցական սուրբ գործեր.

## ՄԱՍԻՆ Ա.

ԵՐԳԵՐ ԵՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ ԸՆԿԱՆ

ՈՐՀՆՈՒԹԻՒՆ ՀՐԵՇՑԱԿԱՑ.

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀՐԵՇՑԱԿԱՑ.

Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն։  
Եւ օրհնութիւն քեզ 'ի բարձունս, օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրապատանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանսամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց։ Տէր թագաւոր սուրբդ երկնային, Աստուած և Հայր ամենակալ։ Տէր և Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և սուրբ Որդի։ Տէր Աստուած Գառն Աստուծոյ և Որդի Հօր. որ առեր զմերս 'ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեզս աշխարհի. և արդընկալ զաղաշանս մեր։ Սուրբդ որ նստիս

ընդ աջմէ Հօր ողորմեաց մեզ: Զի դու միայն  
սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն  
Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր և Հոգիդ  
Սուրբ՝ որ ՚ի վասոս Աստուած ընդ Հօր: ամէն:

Թ.  
ՏԱՂ ՔՐՈՔՆԵԱՑ

Ով զարմանալի. Խորհուրդ այս մեծ  
յայտնեալ. արարիչն Աստուած ՚ի յորդանան  
եկեալ:

Կամէր մլրախիլ, ՚ի ծառայէն իւրմէ.  
չառնոյր Կարապետն զմլրտիլն ՚ի յանձն:  
Յորդանան լուեալ փախատական դառ-  
նայր. վտակ առ վտակ պատգամաւոր լինէր:  
Գետ մի՛ զարհուրիր քո արարիչն եմ  
ես. եկեալ մլրտիմ և լուանամ զմեղա:

---

Այսօր ձայնն հայրական յերկնից իջեալ  
հաճոյական, սիրեցելոյ որդւոյ վկայ.—այ յոր-  
դորէ, զետ յորդորէ, զետ Յորդանան. յորդո-  
րական ձայնիւ երգէր մեծ Կարապետն Յով-  
հաննէս:

ՑԵՍԱՌՆԵԼՆԴԱՌԱՋԻ:

Քրիստոս փառաց թագաւոր այսօր  
եկեալ յընծայումն.

Կատարելով նա զօրէնս քառասնօրեայ  
դալստեամբ:

ՇՐԱԿԱՆՆԵՐ

¶.

ԾԱՀԿԱԶԱՐԴԻ:

Յորժամ եկն Յիսուս յերուսաղէմ 'ի քա-  
ղաքն. ընդառաջ ելին ծերքն ոստովք ձիթե-  
նեօր. և զաստուածորդին փառաւորէին:

'Ի լեռնէ ձիթենեաց տարածանէին ման-  
կունքն զչանդերձս խրեանց. և ոստա ՚ի ծա-  
ռոց բերեալ մատուցանէին աստուածորդւոյն  
սուրբ թագաւորին:

Ոստովք և տերեւեալ ձիթենեօր երա-  
յեցւոց մանկունքն օրհնէին ուրախ լեր Ե-  
րուսաղէմ քաղաք և ցնծա սիօն մայր եկե-  
ղեցի:

Ա.

ՄԵԾ ՈՒԽԱԹԻ:

Ով սքանչելի և տեսիլ ահաւոր. զարարիչն երկնի և երկրի այսօր տեսաք ՚ի խաչին:

Տեսեալ զտէրն ՚ի խաչին խաւարեցաւ արեգակն. և փարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ ՚ի փայր:

Անարգաբար խաչեցաւ տէրն ՚ի մէջ ՚ի յանօրինաց. զի լցցի գիրն որ ասէ թէ ընդ անօրէնմն համարեցաւ:

Ա.

ՄԵԾ ՇԱԽԱԹԻ:

Պարզեատուն ամենեցուն. այսօր խընդրի պարզես ՚ի պիղատոսէ. և արկողն զոյս որպէս զօլժոց հաւանի պատիլ ՚ի Յովսէփայ:

Է.

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ:

Համբարձաւ տէրն մեր յերկինս. ասելով

աշակերտացն. նստարուք 'ի քաղաքիդ յեռուսաղէմ. մինչև զգենուցուք զզօրութիւն'ի բարձանց:

Միաբանեալ սուրբ առաքեալքն միախորհ և միակրօն. միաբան նստէին 'ի սուրբ վերնատանն. և ակն ունէին գալստեան սուրբ հոգւոյն:

Յանկարծակի եհաս 'ի նմանութիւն լուսոյ փայլման. և եկեալ բնակեցաւ 'ի սուրբ առաքեալմ. մինչզեռ նստէին 'ի սուրբ վերնատունն:

¶.

ՀՈՒԵԳԱԼՍՑԵԱՆ:

Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ 'ի բարձանց 'ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտան. մինչզեռ նստէին 'ի սուրբ վերնատանն:

¶.

Ս. ԽԱԶԻ ՎԵՐԱՑՄԱՆ:

Ապաւինեցաք 'ի խաչ քո արարիչ յա-

կ.

ՄԵԾ ՌԻՐԱՅԹԻ:

Ով սքանչելի և տեսիլ ահաւոր. զարարիչն երկնի և երկրի այսօր տեսագը 'ի խաչին:

Տեսեալ զաէրն 'ի խաչին խաւարեցաւ արեգակն. և վարագոյր տաճարին ցելոյր վերուստ մինչ 'ի վայր:

Սնարգաբար խաչեցաւ տէրն 'ի մէջ 'ի յանօրինաց. զի լցցի գիրն որ ասէ թէ ընդ անօրէնսն համարեցաւ:

4.

ՄԵԾ ՇԱԲԱՅԹԻ:

Պարզեատուն ամենեցուն. այսօր խընդրի պարզես 'ի պիղատոսէ. և արկողն զոյս որպէս զօթոց հաւանի պատիլ 'ի Յովսէփայ:

5.

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ:

Համբարձաւ տէրն մեր յերկինս. ասելով

աշակերտացն. նստարուք ՚ի քաղաքիդ յեւ-  
րուսաղէմ մինչև զգենուցուք զզօրութիւն՝ի  
բարձանց:

Միաբանեալ սուրբ առաքեալքն միա-  
խորհ և միակրօն. միաբան նստէին ՚ի սուրբ  
վերնատանն. և ակն ունէին գալստեան սուրբ  
Հոգւոյն:

Յանկարծակի եհաս ՚ի նմանութիւն լու-  
սոյ փայլման. և եկեալ բնակեցաւ ՚ի սուրբ  
առաքեալն. մինչդեռ նստէին ՚ի սուրբ վեր-  
նատունն:

¶.

ՀՈԳԵՑԱԼՍՑԵԱՆ:

Առաքելոյ աղաւնոյ իջաներով մեծաձայն  
հնչմամբ ՚ի բարձանց ՚ի նմանութիւն լուսոյ  
փայլման հրազինեաց անկիզելի զաշակեր-  
տան. մինչդեռ նստէին ՚ի սուրբ վերնա-  
տանն:

¶.

Ս. ԽԱԶԻ ՎԵՐԱՑՄԱՆ:

Ապաւինեցաք ՚ի իսաչ քո արարիչ յա-

ւիտենից. որ ետուր մեզ պահապան յաղթող  
ընդգէմ թշնամնոյն. աղաչեմք սովու փրկիչ  
պահպանեա զանձինս մեր:

Ժ.

Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ:

Որ զգիտութիւն քո գերկնային և զհու-  
գեոր զիմաստութիւն, առաստավէս ծառա-  
լեցեր յեկեղեցիս հայաստանեայց 'ի ձեռն  
սրբոց թարգմանչացն. աղաչանօք սորա ո-  
ղորմեա մեզ աստուած:

Ժա.

Ս. ՍԱՆԴՈՒԽԾ ԿՈՒՍԻ:

Քեւ պարծի այսօր սուրբ Եկեղեցի. ով  
վկայուհի սուրբ Սանդուխտ. որ զհայրականն  
քո թողեր զպաշտօն. վասն Քրիստոսի հեղեր  
զարիւն քո սուրբ:

Աշակերտեցար առաքելոյն Թագէոսի. և  
'ի հաւատս ճշմարիխտ հաստատեցար. ոչ  
խառնակելով ընդ հեթանոսական պաշտօնան.  
արժանի եղեր վերանալ առ հայր:

Թթ.

Ս. ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՑԻ:

Որ յարմատոց հարցն սրբոց մեզ գաւա-  
զան բղիսեցեր զիսահակ սուրբ հայրապետ  
հովուել զհօտ քո Քրիստոս:

Որ զիսաւարն անգիտութեան հայաստա-  
նեայցս լուծեր. զիմաստութեան ծագեալ  
զոյս սովաւ որդւոց թորդոմնայ:

Որ զհանդերձեալ խորհուրդ քո տէր  
տեսլեամբ սրբոյն ծանուցեր. յիշատակի սո-  
րա ընկալ զտօնողացս աղաչանս:

Թթ.

Ս. ՂԵԽՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ:

Որք եկեալ հասեալք լինէին, սևագունդ  
զօրն պարսից. զի յափշտակեսցեն զառաջ-  
նորդմն հայաստանեայց զսուրբ Վեռնդեանսն:

Որք չուեալ գնացեալք լինէին. ի պալատն  
անօրէն թագաւորին. զի վկայեսցեն ճըշ-  
մարիտ սուրբ երրորդութեան, սուրբ Վեռ-  
դեանքն:

Առևաւորիչն ամենեցուն Աւոնդիէ  
սուրբ վարդապետն, խոչական մեծ խոր-  
հրդով խրատեալ լցոյց զաշակերտեալմն.  
ծաւալեալ զլոյս գիտութեան յոգիս արանց  
կատարելոց. կամաւոր յօժարութեամբ կա-  
տարեցան սիրով փրկչին:

Ժ.

Ա. ԴՐԻԳՈՐ ՀՈՒՍԱԽՈՐԶԻ:

Հայաստանեայց հայր հաւատոյ հեղինակ  
ընտրեալ. ճգնողական վարուք տէր Գրիգո-  
րիոս. ի կոճեղա ոլորեալ հոսեալ յարենէ  
սրունք սրբանեալ մարմնոյդ. հաստատելով  
զմեզ ի վէմ հաւատոյ:

Պարակից հոգեղինաց երկնային զօրացն  
սրբափայլ զգեստիւք տէր Գրիգորիոս. ի  
խոր վիրապին իջեր իտղմին ի մէջ դառնա-  
շունչ օձիցն. զի փրկեսցես զմեզ ի չար վի-  
շապէն:

Տանն Աստուծոյ տեսանող բարի. ար-  
ժանացեալ շնորհիւ տէր Գրիգորիոս. կոր-  
ծանիչ բազնեաց քակտիչ մեչենեաց զօրու-

թեամբ խաչին. քահանայապետ ընարեալ  
Աստուածային յայտնութեամբն:

ԺԱ.

ՇՈՂԱԿԱԹԻ Ս. ԷջՄիԱՃՆԻ:

Ուրախ լեռ սուրբ եկեղեցի. քանզի  
Քրիստոս արքայն երկնից այսօր պատկեաց  
զքեզ խաչինիւրով. և զարդարեաց զամուշա  
քո սքանչելի փառօք իւրովք:

Յայնու և առջ տիս որուալ մի մեջադին քայ  
աղբան պարզանի է առ. Ան առու մյուս ընթացկ տառա  
վերա պահանձնալ

## ՄԱՍՆ Բ.

Ճ Թ Ն Ե Ր

ԺՊ.


Ք Ր Ւ Ս Տ Ո Ս Ի Պ Ա Յ Շ Ա Ռ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը  
Վ Ա Ր Դ Ա Վ Ա Ռ

(Մասն. ԺԵ. 1—8).

1. Մի անգամ Յիսուս իւր Պետրոս, Յակովոս և  
Յովհաննէս առաքեալներին տարաւ Թափօր լեառը և  
սկսաւ աղօթք անել այնտեղ. աղօթելու ժամանակ Յի-  
սուսի երեսը փայլեցաւ արեգակի պէս և շորերը սպիտա-  
կացան ինչպէս ձիւն: Երկու մարդ սկսան խօսել Յիսու-  
սի հետ. գոքա Մովսէս և Եղիա մարգարէներն էին:

Աշակերտները երբ Աստուածալին այդ փառքը տե-  
սան՝ հիացան և Պետրոսը ասաց Յիսուսին. «Տէ՛ր, լաւ  
կը լինի որ այստեղ մնանք, երեք վրան (տաղաւար) շե-  
նենք, մէկը Քեզ, մէկը Մովսէսի և մէկն էլ Եղիալի հա-  
մար». նա չը գիտէր, թէ ինչ էր խօսում, որովհետեւ  
վախեցած էին:

Այդ միջոցին մի լուսաւոր ամպ իջաւ և ծածկեց  
նոցա: Երկնքից ձախն եկաւ թէ Դա է իմ սիրելի Որդին,  
Որին հաւանեցի, Դորան լսեցէք: Աշակերտները ահից



թափսւեցան գետին: Իսկ Յիսուս մօտեցաւ նոցա՝ քա-  
ջալերեց և ոտքի կանգնեցրեց. Երբ նոքա վերկացան՝  
Յիսուսին իւր առաջուալ կերպարանքովը տեսան:

2. Վարդավառի տօնը Հայերը քրիստոնեութիւնից

առաջ կատարում էին նաւասարդ ամսի ոկզբում, Հռով-  
մայեցոց Օգոստոսի 11-ին, որ է մեր տարեգլուխը կամ  
Նոր տարին, և ամեն տարեգարձին, որպէս նովի՝ ջրհե-  
ղեղից ազատուելու լիշտակ տօն էին կատարում, աղօթք  
մատուցանելով ճշմարիտ Աստծուն և Աստուածազ-  
տութեան տեղը զարդարում էին վարդերով, որից այդ  
տօնը ստացաւ Վարդավառ անունը. այդ տօնին մի-  
մեանց վերայ ջուր էին ցանում իբրև լիշտակ ջրհե-  
ղեղի և թուցնում էին աղաւնիներ, նովի աղաւնի թուցնե-  
լուն լիշտակ:

A 11  
3063

Երբ Հայաստանում կռավաշտութիւնը տարածուե-  
ցաւ, նաւասարդի տօնի հանդէսը մատուցանում էին Աստղիկ և Անահիտ կոռոքերին և Վահեվանեան մեհ-  
եանին, որ գտնվում էր Արտաշատում և Տարօն գաւա-  
ռում: Իսկ յետոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը այդ հե-  
թանոսական տօնի փոխանակ կարգեց Քրիստոսի պատ-  
ճառակերպութեան տօնը և ջուր ցանելու, աղաւնի թու-  
ցնելու ու վարդ փուելու սովորութիւնը մնաց մինչև այսօր:

Քրիստոսի պայծառակերպութեան տօնին եկեղեցում  
ասւում է արև ժամամուտը.

Երեւի Տէրդ այսօր աշակերտացդ՝ ՚ի Թափօրա-  
կան լնինն, եւ աշակերտացը զարհուրեալք աղա-  
ղակէին ասելով, արասցոք երիս տաղաւարս՝ մի  
Տեառնդ, եւ մի Մոլվիսի եւ մի Եղիայի: Արդ՝ եւ  
մեր բանաւոր հօտք երգեմք լնդ քո ճշմարիտ վկա-  
յեցդ. առաքեա առ մեզ զլոյս քո չնորհացդ՝ ՚ի քո  
միստանգամ՝ զալաւեանդ եւ կեցն:



**ՃԵՏ.**

Յիսուս Քրիստոս երբ Խաչի վերալ էր՝ իւր մօրը  
յանձնեց իւր սիրելի աշակերտ Յովհաննէս աւետարան-  
չին, որի մօտ սուրբ կոյս Մարիամը կացաւ մօտ տասն  
և չորս տարի և երբ տեսաւ, որ իւր մահը մօտեցել է՝  
առաքեալներին և հաւատացեալներին օրհնեց և աւան-  
գեց հոգին: Առաքեալները վերցրին Աստուածամօր մար-  
մինը և մեծ հանդիսով տարան թաղեցին Գեթսեմանի  
գիւղում:

Ս. Բարդուղմէոս առաքեալը ներկայ չէր թաղմանը,  
երբ եկաւ՝ տեսաւ որ Ա. Կոյսը այլ ևս կենդանի չէ,  
խստ փափագեցաւ տեսնել նորա մարմինը. այդ պատ-  
ճառով առաքեալների հետ գնաց Գեթսեմանի և երբ  
բացին տապանը՝ ս. Կուսի մարմինը ըստ գտան նորա մէջ  
և հաւատացին, որ ս. մարմինը հըեշտակների օրհներգու-  
թեամբ համբարձել—վերափոխուել եր երկինքը իւր Միա-  
ծին Որդու մօտ:

Բարդուղիմէոսը սաստիկ տիբրեցաւ, որ ս. Կուսին  
ոչ կենդանի կարողացաւ տեսնել, և ոչ գոնէ նորա սուրբ  
մարմինը տեսաւ տապանի մէջ։ Առաքեալները տեսնելով  
նորա այս տիբրութիւնը՝ ընծայեցին նորան ս. Կուսի  
պատկերը, որ Յովհաննէս Աւետարանիցը նկարել էր կի-  
պարիս փայտի վերալ և սուրբ Աստուածածինը իւր սուրբ  
երեսի վերալ դնելով ինդքել էր Աստծուց նորանով բժըզ-

կութեան շնորհ այն միջոցին խիստ տարածուած բորոտութեան ցաւին:

Բարդուղիմէոսը չափազանց ուրախանալով՝ առաւ սպատկերը, շտապեց Հայաստան և Տիգրիս զետի ափին Կանգուար բերդի մօտ մի տաճար շինեց սուրբ Աստուածածնի անունով, ուր պահեց տիրամօր պատկերը. այնտեղ հաւաքեց կոյսեր, որոնց վերայ մայրապետ կարգեց Մարիամ անունով մէկին, իւր աշակերտներից մէկին էլ նոցա համար քահանալ ձեռնադրեց և ալդ տեղը անուանեց Հոգեաց վանք:

Ա. Աստուածածնի վերափոխման տօնը Հալոց եկեղեցին կատարում է ամառը, Օգոստոս ամսին. այդ օրը եկեղեցում ս. Պատարազից յետոյ խաղողի օրհնութիւն է լինում:

ԺԱ.

Ա. ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐՊՈՒՎԼԻՄԵՈՍ.

1. Հալոց Ա. բ գ ա ր թագաւորը լսեց, թէ երուսաղէմի մէջ քարոզում է մեր Տէր Յիսուս Քրիստոսը և բժըշկում է բորոտներ, կաղեր, կոլրեր և ամեն տեսակ հիւանդներ: Եւ որովհետեւ ինքն էլ հիւանդ էր՝ դեսպանների ձեռքով մի նամակ ուղարկեց Փըլքին, որի մէջ զրում էր թէ՝ լսել եմ որ Դու առանց դեղի բժշկում ես տեսակ տեսակ հիւանդներ և յարութիւն ես տալիս մե-

ուելներին. ուրեմն կամ Աստուած ես Դու և կամ Աստուծոյ Որդի. ուստի խնդրում եմ գաս ինձ մօտ և բժշշկես իմ հիւանդութիւնը. այլ և լսել եմ, թէ Հրեաները ուզում են քեզ չարչարել. ես մի փոքրիկ քաղաքունիմ, որ երկուսիս ել բաւական է:

Աբգարը դեսպանների հետ զրեց և մի նկարիչ և պատուիրեց նորան, որ եթէ Յիսուս չը համաձայնի գալ, նկարէ նորա պատկերը և բերէ:

Դեսպանները հասան Երուսաղէմ այն օրը, երբ Յիսուս փառքով Երուսաղէմ էր մտնում. նոքա առաքեալների ձեռքով Աբգարի նամակը տուին Փրկչին: Յիսուս յանձնեց Թովմաս առաքեալին պատասխան գրել Աբգարին, որ ինքը Իւր համբարձումից յետոյ կուղարկի Իւր աշակերտներից մէկին, որ կը բժշկէ Աբգարի հիւանդութիւնը:

Երբ Աբգարի ուղարկած նկարիչը տեսաւ, որ Յիսուս չի համաձայնում գնալ, սկսեց նկարել Փրկչի պատկերը, բայց չը կարողացաւ. Յիսուս կանչեց նորան Իւր մօտ, պահանջեց մի մաքուր կտաւ և դնելով Իւր դէմքի վերա՝ դրոշմեց նորա վերայ Իւր Աստուածային պատկերը և դեսպանների ձեռքով ուղարկեց Աբգարին: Այս պատկերը կոչվում է Դաստառական Քրիստոսի կուղարկած նկարիչը:

Քրիստոսի համբարձումից յետոյ Հայաստան եկաւ Թագէսսոս առաքեալը, որ Նորա եօթանասուն և երկու աշակերտներից մէկն էր, և բերեց իւր հետ Փրկչի կողամուխ Դեղարդ գալ գը, որ այժմ գտնվում է սուրբ Եջմիածնալ տաճարում: Նա եկաւ Եղեսիա քաղաքը, բժշկեց Աբգար թագաւորին, մկրտեց նորա բոլոր տունը և Եղեսիայի բնակիչներին, քանդեց բոլոր կուտանները և

ամեն տեղ կանգնեցրեց Քըիստոսի սուրբ Խաչը. Եկեղեցիներ շինեց, քահանաներ կարգեց և իւր տեղ ձեռնադրելով (թագաւորի հոռլ (թագ) շինող Ագրէին եպիսկոպոս՝ գնաց Հայաստանի ուրիշ կողմերը աւետարանը քարոզելու:



Ս.բգարի հրամանով գնաց նորա քըրոջ որդի Սանատրուկ  
իշխանի մօտ, քարոզեց այնտեղ և Սանատրուկին իւր  
Սանդուխտ աղջկայ հետ գարձեց քրիստոնեայ. այնտեղից  
էլ գնաց Հայաստանի ուրիշ կողմերը և քարոզում էր.  
բայց վերջը Սանատրուկը ուրանալով քրիստոնէութիւնը՝  
նահատակեց Թագէոս առաքեալին և նորա հետ իւր աղ-  
ջիկ Սանդուխտ կոյսին:

2. Թաղէոս առաքեալից լետոյ Քրիստոսից ԵՅ տարի  
լետոյ Հայաստան եկաւ ս. Ի արդուղիմէ ոս առա-  
քեալը, որ իւր հետ բերելով ս. կուս Մարիամի պատկերը՝  
Տիգրիս գետի ավին մի փոքրիկ եկեղեցի շինեց սուրբ-  
Աստուածածին անունով և պատկերը գրաւ այնտեղ: Նա  
Հայաստանում քարոզեց, շատերին քրիստոնեալ դարձրեց  
և երկու տարի շարունակ Հայաստանում քարոզելուց լե-  
տոյ՝ նահատակուեցաւ Սանատորուկից:

Ա. Թագէոս և Բարդուղիմէոս առաքեալները կոչվում  
են Հայաստանի առաջին և ուստահ պատրիարքի չներ,  
որովհետեւ Հայաստանում առաջին անգամ նոքա տա-  
րածեցին քրիստոնէութիւնը. իսկ Հայոց եկեղեցին կոչ-  
վում է առաջին քրիստոնէական եկեղեցն ին,  
որովհետեւ ամեն ազգերից առաջ ընդունեց քրիստոնէու-  
թիւնը և ունի շարունակ առաքելական յաջորդութիւն՝  
սկսած ս. Թագէոս և Բարդուղիմէոսից:

Մեր եկեղեցին հանդիսաւոր կերպով տօնաւմ է այդ երկու լուսաւորիչների տանը ամեն տարի:

ԺԵ.

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՍԻՈՌԻԶ.

1. Սուրբ Գ ր ի գ ո ր Լ ո ւ ս ա ւ ո ր ի չ ը Անակ նա-  
խարարի որդին էր. նա ծնուեցաւ 257 թուին Վաղար-  
շապատ քաղաքում:

Պարսից Արտաշելի թագաւորը մի քանի անգամ յազ-  
թուած լինելով մեր Խոսրով թագաւորից՝ աշխատում էր  
միջոցներ գտնել ազատուելու նորանից. և ահա գտնու-  
եցաւ Անակ անունով մէկ նախարար, որ յանձն առաւ  
խարդախ միջոցներով գլուխ բերելու Արտաշրի ցանկու-  
թիւնը. նա առնելով իւր ընտանիքը Պարսկաստանից  
ինչպէս փախստական եկաւ Հայաստան և ապաւինեց  
Խոսրովի պաշտպանութեան: Երեք տարի նա վայելում  
էր Խոսրովի սէրը:

Մի անգամ արքունի որսի ժամանակ յարմար Հա-  
մարելով Անակը սպանեց թագաւորին և փախչելիս խեղ-  
դուեցաւ Երասխ գետի մէջ: Խոսրովը վերջին շնչին պա-  
տուիրեց Անակի ընտանիքը ջնջել, որոնցից ազատուեցան  
երկու որդիք—Սուրէն և Գրիգոր, առաջինին փախցրին  
Պարսկաստան, իսկ փոքր որդուն նորա դալեակ Սօֆիան  
տարաւ Կեսարիա, որ ալժմ կոչվում է Ղայսերի քաղաք  
և գտնվում է Տաճկաստանում. և որովհետեւ ինքը Սօ-  
փիան քրիստոնեալ էր, այնտեղ մկրտեց նորան և անու-  
նը դրեց Գ ր ի գ ո ր: Սա Կեսարիայում ստացաւ քրիստո-  
նէական կրթութիւն. ամուսնացաւ Մարիամ անունով մի

աղջկալ հետ և ունեցաւ երկու որդի՝ Վ. ըդանէս և Ա. ըիս-  
տակէս:

Երեք տարուց լետոյ Մարիամը իւր փոքր որդու  
հետ մտաւ կուսանոց, իսկ Գրիգորը Վ. ըդանէսին յանձ-  
նելով դայեկին՝ ինքը զնաց Հռովմ, որ Խոսրովի որդի  
Տրդատի մօտ ծառալութեամբ քաւէ իւր հօր մեղքը:

Մի քանի տարուց լետոյ Տրդատը իւր քաջութիւն-  
ների համար թագաւորական թագ ստանալով՝ լետ դար-  
ձաւ Հայաստան հայրական աթոռը ժառանգելու: ծանա-  
պարհին երբ հասան Եկեղեց գաւառի Երիզալ գիւղը՝  
Տրդատը շնորհակալութեան զոհ բերեց Անահիտ կուռ-  
քին և Գրիգորին էլ հրամալեց, որ ծաղկեալ պասկ դնէ-  
նորա արձանին. իսկ Գրիգորը, որ մինչև այդ ժամանակ  
ծածուկ էր պահել իւր քրիստոնեալ լինելը, այժմ յայտ-  
նելով բացարձակ հրաժարուեցաւ թագաւորի հրամանը  
կատարելուց: Այդ պատճառով թագաւորը հրամալեց  
տասներկու տեսակ խիստ չարչարանքներ տալ նորան, և  
այդ բոլորը համբերութեամբ տարաւ Գրիգորը: Իսկ երբ  
իմացաւ Տրդատը, թէ Գրիգորը իւր հօր սպանող Անակի  
որդին է՝ հրամալեց ձգել Արտաշատ քաղաքի գուբը  
(Խորվիրապ), ուր ձգում էին մահապարտներին: Այդ  
գուբի մէջ Գրիգորը մնաց մօտ 15 տարի, ըստ աւանդու-  
թեան, կերակրուելով մի պառաւ կնոջ ձեռքով:

2. 301 Թուին Հռովմից վախան Հայաստան Հռիփ-  
սիմեան կոյսերը, որոնց Տրդատը նահատակել տուեց, դո-  
րա համար իւր չարագործութեան պատիժը ստացաւ.

խիղճը սկսաւ տանջել նորան և ընկաւ թափառելու անմարդաբնակ տեղերը, ուր խոզերն էին ապրում:

**ՏՐՈՂԱԹԻ ՔՈՎՐ ԽՈՎՐՈՎՀԵԴԽԱԹԻՆ Քանիցս կրկնուած**



երազում լայտնուեցաւ, թէ Գրիգորը կենդանի է Խոր-  
վիրասի մէջ և թէ միայն նա կարող է բժշկել Տրդա-  
տին և ժողովրդին. Խսկան Օտար անունով նախարարին  
ուղարկեցին Խորվիրասի և գրեց հանեցին ո. Գրիգորին,

որ եկաւ Վաղարշապատ, ս. Կոյսերի մարմինները թաղեց և իւր Յօ օրուալ քարոզութեան ընթացքում հետզհետէ բժշկեց Տրդատին և բոլոր ժողովրդին:

Յետոյ Տրդատը հաւաքելով բոլոր մեծամեծներին և ժողովրդեան՝ ընդհանուր խորհրդով ընտրեցին ս. Գրիգորին Հայաստանի հովիւ և ուղարկեցին Կեսարիա ս. Թաղէոսի յաջորդ Ղեռնդիոս պատրիարքի մօտ, որից ձեռնադրուեցաւ Հայրապետ ամենայն հալոց, Փրկչի 302 թուին: Ղեռնդիոս պատրիարքը ընծալեց նորան Յովհաննէս Կարապետի և Աթանագինէ եպիսկոպոսի մասունքները. Երբ ս. Գրիգորը հասաւ Մուշ քաղաքը՝ այնտեղ մի եկեղեցի շինեց և Յովհաննէս Կարապետի մասունքի մի մասը դրեց այնտեղ, որ ասուեցաւ Սուրբ Կարապետի վանք:

Ս. Գրիգորը Կեսարիալից լետ դառնալիս ճանապարհին կուռքերի արձանները քանդեց, շատերին մկրտեց և քահանակը ու եպիսկոպոս ձեռնադրելով՝ յանձնեց նոցա խնամքին հաւատացեալ ժողովուրդը: Երբ հասաւ Վաղարշակերտ քաղաքը՝ ընդառաջել էր թագաւորը իւր սլալատականներով, զօրքերով և ժողովրդով, որոնց Եփրատ գետի մէջ մկրտեց, փոխելով Տրդատի անունը Յովհաննէս: Իսկ երբ Վաղարշապատ հասաւ՝ Տրդատի օգնութեամբ շինեց ս. Էջմիածնալ տաճարը, Հռիփսիմեանց և Գայիանեանց մատուռները, ձեռնադրեց քահանաներ և եպիսկոպոսներ, բաց արաւ ուսումնարաններ, տօներ սահմանեց և Տրդատի օգնութեամբ քրիստոնէութիւնը ծաղկեց ամեն տեղ:

Եւ այսպէս քրիստոնէական կրօնը Հայաստանում տարածելուց լետոյ՝ սուրբ Գրիգորը 321 թուին առանձ-

Նացաւ Մանիալ այլը, ուր և վախճանեցաւ, որի մարմինը հովիւները գտնելով թաղեցին այնտեղ: Երկար ժամանակ նորա մարմինը մնալով այնտեղ՝ վերջը Գառնիկ անունով մի ճգնաւոր գտաւ և թաղեց Թորդանում, իսկ վերջը տարուեցաւ Վաղարշապատ և ամփոփուեցաւ յանուն ս. Գրիգորի կառուցած (Զուարթնոց) եկեղեցում:

Ա. Գրիգորը կոչվում է Հայաստանի երկրորդ Լուսաւորիչ, որովհետեւ ս. Թաղէոս և Բարդուղիմէոս նախկին Լուսաւորիչներից լետոյ սա նորողեց քրիստոնէութիւնը Հայաստանում:

Ա. Գրիգոր Լուսաւորչի տօնը Երեք անգամ ենք կատարում տարին:

Ա. Մեծի պահոց հինգերորդ շաբաթ օրը կատարում ենք չարչարանքի և Խորվիրապը մտնելու տօնը:

Բ. Հողեղալստից լետոյ Երկրորդ շաբաթ օրը տօնում ենք Խորվիրապից դուրս գտըլ:

Գ. Երկու շաբաթ անց այդ տօնից տօնում ենք նորա սուրբ Նշխարները գտնելու տօնը:

ի.

ՀՈՒՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԵՐ

Սուրբ Հռիփսիմէ կուսը, որ թագաւորի տանից էր, իւր ուսումը ստացաւ Հռովմի մէկ կուսանոցում Գայիանէ մալքապետի մօտ և յայտնի էր ամենքին իւր

պարկեշտութեամբ, Աստուածալաշտութեամբ և գեղեցկութեամբ:

Հռովմալեցւոց Գիոկետիանոս կայարը շատ հաւանեց Հռիփսիմէին և մալրապետի միջոցով առաջարկեց նորան թագուհի լինել տէրութեան՝ իւր հետ ամուսնանալով: Բայց Հռիփսիմէն կամենալով իւր ուխտին հաւատարիմ մնալ՝ մերժեց կայսեր առաջարկութիւնը. և այս կոյսերը տեսնելով, որ այնուհետև իրանց կեանքը վտանգի մէջ պէտք է լինի, Գալիսնէ մալրապետի առաջնորդութեամբ և մի քանի քահանաներով, որոնք մօտ եօթանասուն հոգի էին, գաղտնի փախան Հռովմից գէպի Երուսաղէմ. Երկրագեցին սուրբ տեղերին և ապա Հայաստանի զանազան կողմերը մանգայլուց լետոյ վերջը իջևանեցին Վարագ սարի վերայ: Անտեղից սուրբ Հռիփսիմեանք Երեսուն և եօթն հոգւով գնացին Վաղարշապատ քաղաքը և բնակեցան քաղաքից գուրս գտնուած մի հնձանի մէջ, ուր հուլունք պատրաստելով ապրում էին:

Երշ որ Գիոկետիանոսը լսեց, թէ Հռիփսիմէն մալրապետի և ուրիշ շատ ընկերների հետ փախել է Հռովմից, իսկոյն խնդրակներ ուղարկեց ամեն կողմ որ գտնեն նորան. Հրովարտակ գրեց մեր թագաւոր Տրդատին, որի մէջ գրում էր թէ Հռիփսիմէին կամ ինքը կին վերցնէ և կամ ուղարկէ Հռովմ իւր մօտ:

Իսկոյն Տրդատը մարդիկ ուղարկեց որոնելու այդ կոյսերին, որոնք գտնուեցան հնձանի մէջ. Տրդատը այնպէս հաւանեց Հռիփսիմէին, որ ցանկացաւ նորան Հայաստանի թագուհի գարձնել. բայց Հռիփսիմէն մերժեց Տրդատի առաջարկութիւնը, ամենևին չլախենալով

նորա սպառնալիքներից, որովհետև ուխտել էր իւր կեանքը նուիրել Աստծուն մինչեւ մահը: Գայիանէն էլ յորդում էր նորան ամենափին չը փոխել իւր միտքը:

Տրդատը խիստ բարկացաւ Հռիփսիմէի և Գայիանէի արա վարմունքի վերայ և հրամայեց նահատակել նոցա՝ բոլոր ընկերների հետ. գահիճները գնացին և տեղնուտեղը ամենքին էլ կոտորեցին և ժողին անթաղ, մինչեւ որ ս. Գրիգոր Լուսաւորիչը Խորվիրապից գուրս եկաւ և ամփոփեց նոցա մարմինները ու նոցա վերայ շինեց մատուռներ:

Սոքա կոչուեցան Հռիփսիմէ անք և Գայիանէ անք իրանց դիսաւորների անունով, որոնց տօնը Հայոց եկեղեցին կատարում է ամեն տարի հանդիսով Հոգեգալստեան երկրորդ շաբաթը ս. Լուսաւորչի տօնից առաջ:

### իս.


### ՏՕՆ ՄՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ.

Երբ որ սուրբ Գրիգոր Լուսաւորչին Խորվիրապից հանեցին՝ Տրդատ թագաւորը, նախարարները և շատ ժողովուրդ հաւաքուեցան նորա չորս կողմը. ս. Գրիգորը վաթսուն և հինգ օր շարունակ հնձանում քարոզեց նոցա Քրիստոսի սուրբ Աւետարանը:

Նա տեսաւ մի լուսեղէն մարդ, որ իջաւ ներքեւ և որի հետ լոյսը վերևեց իջնում էր մինչեւ ներքեւ. այն մարդը ձեռքին բռնած ունէր մի մեծ ոսկե մուրճ-

ուռն, նա եկաւ հասաւ մինչև յերկիր և ոսկէ ուռով  
խփեց գետնին քաղաքի մէջտեղում, ալնպէս որ ալդ  
ձալնի վերայ թնդաց անդունդքը:

Ահաւոր տեսքով մարդը, որ ոսկէ ուռով բաղիսեց  
երկիրը՝ Հօր Աստուծոյ Միածին որդին էր, որ իջաւ  
երկնքից: Այս տեսիլքը եղաւ 302 թուին: Երբ ս. Գրի-  
գորը Տրդատ թագաւորին և նախարարներին պատմեց  
ալդ տեսիլը՝ իսկոյն նոցա և բոլոր ժողովրդի օգնու-



թեամբ Միածնի իջած տեղը շինեց Մալը եկեղեցի,  
որին անուանեց Էջ-Միլ. Ծին:

Սուրբ Եջմիածինը նշանաւոր է նորանով, որ ս.  
Լուսաւորիչը այնտեղ հաստատեց ամենայն Հայերի Հայ-  
րապետական Աթոռը, այնտեղ է օրհնվում սուրբ  
Միւոօնը, և այնտեղ են ձեռնադրվում և օծում Հայոց  
ազգի կաթուղիկոսները և եպիսկոպոսները:

Սուրբ պատճառով ս. Եջմիածնալ տօնը մեծ հանդի-  
սով տօնում է Հայաստանեաց եկեղեցին: Ա. Եջմիածինը  
ամենայն Հայերի սիրտն է, նրա հետ են կապուած բո-  
լոր քրիստոնեալ Հայերը, ինչ երկրումն էլ որ բնակուե-  
լու լինին, որովհետեւ մեր ս. Լուսաւորչի հիմնած ա-  
ռաջին եկեղեցին է և այնտեղից է տարածում բոլոր  
Հայերի վերալ Քրիստոսի սուրբ հաւատի լուսը:

Ա. Եջմիածնալ տօնը կատարում է Հոգեգալուստի  
երկրորդ կիւրակեին:

իբ.

ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒԲԻ ԽԱԶԻ:



Երբ որ առաջին գարում Պատրոնիկէ թագուհին  
գտաւ Քրիստոսի սուրբ Խաչափայտը՝ Յակովոս Տեառն-  
եղբալը նորանից մի կտոր տուաւ թագուհուն: Եւ

որովհետեւ Հռիփսիմէ կոյսը նորա ցեղիցն էր՝ այս մասունքը անցած էր նորա ձեռք։ Երբ որ Հռիփսիմէն իւր ընկերներով Հռովմից փախաւ Հայաստան՝ Խաչարաբի ալդ մասն էլ հետն ունէր իբրև իրան պահապան։ Եւ երբ նոքա հասան Վարագ սարը՝ Հռիփսիմէն վախենալով թէ մի գուցէ ալդ Խաչը ընկնի անհաւատների ձեռքը և անարգուի, թաղեց Վարագ լերան գլխին 300 թուին, այնպէս որ տեղը ոչ ոք չէր իմանում, թէպէտ աւանդութեամբ յայտնի էր, որ Կենաց Փայտի կտորը պահուած էր Վարագ լերան վերալ։

Նատ տարիներ անցնելուց յետոյ ալդ լերան վերալ ճգնաւում էր Թօդիկ անունով մի մարդ. մէկ օր (653 թուին) առաւօտեան Թօդիկը և իւր աշակերտ Յօվելը յանկարծ տեսան մի լոյս կանգնած Վարագ սարի մէկ քարի վերայ և տասերկու լուսեղին սիւներ նորա շուրջը. յետոյ լուսեղին նշանը վերացաւ քարից և մտաւ եկեղեցի ու կանգնեց սեղանի վերալ. նոքա մտան եկեղեցին և երկրպագեցին սուրբ Նշանին։ Լուսեղին սիւները տասներկու օր մնացին, մինչեւ որ հեռաւոր բնակիչները տեսան և հոգեւորական ու աշխարհական մեծ բազմութիւն ժողովուեցան այնտեղ, որոնց հետ և Ներսէս Գ. Ենող կոչուած կաթուղիկոսը և Ռշտունեաց Վարդ նախարարը։

Կաթուղիկոսը ի պատիւ նոր գտնուած սուրբ Խաչի սահմանեց Վարագաւ խաչի տօն կատարել հոկտեմբեր ամսին և մի շաբաթ պահէել, որ կոչվում է Վանցոց պահէք։

Առաջ առջիւնան զարմանաւով ոչ ոռ հստացաւ առաջ ամսիւնքնել առաջ գոյաց ին քայլութ պահուած

իգ.

ԵՐԵՒԱՆԻՄՆ ՍՈՒՐԲ ԽՍ.ԶԻՆ.

351 թուին Մեծ Կոստանդիանոսի որդի Կոստանդ կայսեր թագաւորութեան օրերում մի անգամ, մալիսի եօթներորդ օրը առաւօտեան, Քրիստոսի սուրբ Խաչը խաչաձև ճառագալթներով փայլեց օդի մէջ Գողգոթա սարի գլխին, այնպէս որ նորա լուսաւոր ճառագալթները արեգակի լոյսը փակելով տարածւում էին մինչև Չեթենեաց սարը. այս երկոյթը շարունակուեցաւ մի քանի ժամ և տեսանելի էր Երուսաղէմի բոլոր բնակիչներին: Քրիստոնէից բազմութիւնը փառք էր տալիս Աստծուն, որ այդ սքանչելիքը ցոյց տուեց անհաւատներին:

Հազարաւոր մարդիկ այս սքանչելիքը տեսնելուց յետոյ քրիստոնէութիւն ընդունեցին և մկրտուեցան Երուսաղէմի սուրբ Կիւրեղ Հայրապետի ձեռքով. սա Կոստանդ կայսեր գրեց սուրբ Խաչի Հրաշալի երկումը և Հրէաների ու Հեթանոսների մէջ սկսաւ քարոզել և շատերին նոցանից դարձեց քրիստոնեալ:

Մեր ս. եկեղեցին մինչև այսօր էլ տօնում է ս. Խաչի երեւումը միշտ Յինանց (Զատկից յետով) Հինգերորդ Կիւրակէին:

իդ.

ՄԵԾ ՆԵՐՍԻ Ա.

1. ՄԵԾ ՆԵՐԱՀՄ ՀԱՅՐԱՊԵՏՈՐ ՄՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒ-  
ՍԱԼՈՐՁԻ ԹՈՌԱՆ ԹՈՌԱՆ ԷՐ. ՆՈՐԱ ՀՕՐ անունն էր Ա-  
ԹԱՆԱԳԻՒՆԵ: ՆԵՐԱՀՄ Իւր ուսումը ստացել էր ԿԵՍԱՐԻԱ-  
ԿՈՒՄ և ծառալում էր Հայոց արքունիքում ինչպէս սե-  
նեկապետ և զինակիր թագաւորի և իւր քաղցր բար-  
քով սիրելի էր ամենին: Նա մի որդի ունեցաւ՝ Սահակ  
անունով:

Փառներսէհ կամուղիկոսի մահից լետոյ Հայոց նա-  
խարարները և մեծամեծները բազմաթիւ ժողովրդեան  
հետ գնացին Արշակ թագաւորի մօտ և խորհուրդ անե-  
լով ընտրեցին Ներսէսին ս. Լուսաւորչի Աթոռի գահա-  
կալ ՅԵԿ թուին:

Ներսէսը բարեկարգեց Հայաստան աշխարհ ամենալն  
կողմից: Նա Արշակ թագաւորի հաւանութեամբ ազգակին  
ժողով գումարեց Աշտիշատ քաղաքում և վերացրեց այն  
ժամանակ եղած բոլոր անկարգութիւնները. նա շինեց  
աղքատանոցներ և հիւանդանոցներ ամեն գաւառների  
մէջ և ընդհանուր վերատեսուչ կարգեց նոցա վերայ  
իւր սարկաւագ Խաղին: Ամեն զիւղերում վանքեր և  
իշեաններ շինեց ճանապարհորդների և հիւրերի համար.  
ապաստանարաններ շինեց ծերերի և կարօտեալների հա-  
մար. մենաստաններ և գալրոցներ շինեց ամեն տեղ, և  
լունարէն ու ասոլերէն լեզուներով գիտութիւնը և  
Սատուածպաշտութիւնը տարածուեց ամեն կողմ: Ներ-

սէսի շինած ալդպիսի բարեգործական շինութիւննների  
թիւը երկու հազարից աւելի էր:

Ներսէսը արգելեց հեթանոսական սովորութիւնները,  
ինչպէս օրինակ՝ մեռեների վրայ անտու լաց լինելը, սևեր  
հագնելը և աղն:

Ներսէսը ման էր գայիս գիւղեր ու քաղաքներ և  
ամեն տեղ հաւասար կերպով տարածում էր իւը ինսամքը.  
ամեն օր իւը հետ սեղան էր նստեցնում ոչ թէ միայն  
նախարարներին ու մեծամեծներին, այլ մանաւանդ աղ-  
քատներ, օտարականներ, կաղեր, կողբեր ու հիւանդներ,  
սրոնց վերքերը շատ անգամ ինքն էր լուանում ու դեղ  
գնում:

Թագաւորը, նախարարները և եպիսկոպոսները տես-  
նելով մեծն ներսէսի ալդպիսի երսելի գործերը՝ ժողով  
կազմեցին Վաղարշապատ քաղաքում և պատուեցին նորան  
Պատրիարք տիտղոսով և որոշեցին, որ Հայոց կաթո-  
ղիկոսը այլ ևս Կեսարիա չը գնայ օծուելու, այլ ձեռնա-  
դրուի ու օծուի իւը ազգի եպիսկոպոսներից ս. Էջմիած-  
նումը, որպիսի կարգը տեսում է մինչև ալոր:

---

2. Ներսէսը երբ լսեց, որ Թէոդոս զօրավարը գե-  
մում է Հայաստանը աւելիլու, գնաց նորա առաջ և  
նորա բարկութիւնը իջեցրեց, գնաց Վ. Պօլիս Վաղեն-  
տիանոս կալսեր բարկութիւնը դադարեցրեց և Հայոց  
պատանդները աղատելով մեծ պատուով լետ դարձաւ  
Հայաստան:

Ներսէսը լաւ հասկանալով ազգի միութեան կարե-  
սորութիւնը՝ երբ տեսաւ որ Հայոց Արշակ թագաւորի

ու նախարարների մէջ երկալառակութիւն կար՝ յորդողեց նոցա, յանդիմաննեց և նախարարներին հաշտեցրեց թագաւորի հետ:

Յետոյ ներսէս երկրորդ անդամ գնաց Կ. Պօլիս Վաղէս կամեր բարկութիւնը հանգստացնելու թագաւորի վերաբերութեամբ. և այդ ժամանակ նորանից աքսորուեցաւ մի անմարդաբնակ կղզի, որտեղից ազատուեցաւ Վաղէսի մահից յետոյ և ներկայ գտնուեցաւ Կ. Պօլսի տիեզերական ժողովին և յետ դարձաւ Հայաստան, բերելով իւր հետ Արշակ թագաւորի որդի Պալին, որ պատանդ էր այնտեղ և թագաւորեցրեց Հայոց վերալ, որպէս զի Պարսից Շավուհ թագաւորի Հայաստանին բերած թշուառութիւնները վերացնէ: Պարսիկներին հայածեց Հայաստանից. պատերազմի ժամանակ ինքը նպատարի գլխին կանգնած աղօթում էր և ալդպիսով յաղթուեցան պարսիկները:


Այսքան նշանաւոր գործեր կատարելուց յետոյ ներսէսը թունաւորուեցաւ Պապ թագաւորից, որովհետեւ միշտ յանդիմանում էր նորան վատ ընթացքի սատճառով և թաղուեցաւ Թիլն աւանի մալլ եկեղեցու մէջ:

### III.

#### Ս. ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՎՊ Թ.Ա.ՐԴՄԱՆԻՉՆԵՐ.

1. Քրիստոնէութիւնը Հայաստանում տարածուելուց սկսած չորս հարիւր տարի շարունակ մեր եկեղեցիներում ժամասացութիւնը լինում էր ասորերէն ու յունարէն լեզուներով, որովհետեւ հայերը սեսլհական տա-

ոեր չունէին, որ մեր լեզուով՝ գրէին եկեղեցական գլուխ քերը. այդ պատճառով էլ եկեղեցու ժամերգութիւնը անշարժ մնուի ակար ակար մէջ դպիս էի առնի.



Հասկանալի էր Հայ ժողովրդի մեծ մասին: Այս բանի

վերալ շատ էին մտածում մեր ս. Սահակ և Մեսրովակ  
Հալրապետները:

Ահա թէ ովքեր էին գոքա և ինչպէս գտան Հալրոց  
տառերը:

Ս. Մեսրովակը, որ Մաշտոց էլ է կոչվում, Տա-  
րոն գաւառի Հացեկաց գիւղիցն էր. Նորա հօր անունն  
էր Վարդան. նա մանկութեան հասակից մնուեցաւ  
բարեսպաշտութեան մէջ և սովորեց յունարէն, ա-  
սորերէն և պարակերէն լեզուները. և որովհետեւ ալդ  
լեզուների մէջ շատ վարժ էր՝ առաջ մեծ ներսէս կա-  
թուղիկոսի մօտ գրագրութիւն էր անում, իսկ նորա  
մահից յետոյ կարգուեցաւ հալրոց թագաւորների դիւ-  
նադպիր:

Քիչ ժամանակից յետոյ Մեսրովակը թողեց աշխար-  
հի մեծութիւններն ու փառքերը և քաշուեցաւ Գողթն  
գաւառի վանքերից մէկը և ալնտեղ սկսեց սուրբ կեանք  
անցկացնել. նա շատ հետեւողներ ունեցաւ և շատերը  
աշակերտեցան նորան: Մեսրովակը իւր քարոզութեան և  
ուսուցչութեան ժամանակ տեսնում էր, որ հայերէն տա-  
ռեր չը լինելու պատճառով ժողովուրդը չէր հասկանում  
ասորոց և յունաց լեզուով ժամերգութիւնը, դորա հա-  
մար էլ խիստ ցանկանում էր հայերէն տառեր հնարել:

Նա թողեց Գողթն գաւառը և եկաւ Վաղարշապատ,  
ուր իւր միտքը լայտնեց ս. Սահակ կաթուղիկոսին և  
շուտով Հալրոց Վռամշապուհ թագաւորի ներկայութեամբ  
մի ժողով կազմեցին, որտեղ երկար մտածեցին, թէ ինչ  
ձեռվ կարելի էր օգնել ալդ բանին:

Վռամշապուհ թագաւորը լայտնեց գոցա, թէ  
Գանիէլ անունով մէկ Ասորի եպիսկոպոսի մօտ գտնվում


են հայ նշանագիրներ։ Ալդ պատճառով թագաւորի կարգադրութեամբ ուղարկվում է Հարել քահանան Վահրիմ իշխանի հետ Դանիէլի մօտ, ուր մի տարի մնալով Հարելը սովորում է ալդ նշանագրերը և գալով Վաղարշապատ բաց են անում ուսումնարան, հաւաքում են աշակերտներ և սկսում են սովորեցնել. բայց անյաջող իտոյ Մեսրովալը անձամբ գնում է այնուեղ և նոյնը սովորում. վերադառնալով ուսուցանում է, բայց դարձեալ անյաջող է անցնում. ալդ է իինում պատճառ, որ նա սկսում է ճանապարհորդել զանազան գիտնական մարդկանց մօտ տառեր գտնելու գիտաւորութեամբ։ Նախ գնաց Եղեսիա Պղատոսի մօտ, որը խորհուրդ տուեց նորան դիմել Փիւնիկէ Եպիփանոսին և նորան վախճանած գտնելով՝ գնաց Սամոսատ Հռուփանոսի մօտ։

Վերջը Մեսրովալը մարդկալին հնարագիտութիւնից լոյսը կտրած՝ դիմեց աղօթքով Աստծուն. գտաւ տառերը, զրի անցկացրեց և դիմեց Հռուփանոսին ալդ տառերը ձևակերպելու համար, որ և յաջողեցաւ 40Յ թուին։

Մեսրովալը շտապեց Հայաստան, ուր թագաւորի հրամանով իսկոյն ժողովեց մանուկներ, դպրոցներ բաց արաւ և այսպիսով ուսումն ու գիտութիւնը հակերէն տառերով սկսաւ տարածուիլ Հայաստանի մէջ. թարգմանեց Աստուածաշունչ Սուրբ Գիրքը, բարեկարգեց ծիսարանը, որ նորա անունով կոչուեցաւ Մաշոց։

Վրացիք և Աղուաններն էլ իմանալով արդ՝ խնդրեցին Մեսրովալին, որ իրանց համար էլ տառեր հնարէ. Մեսրովալը գնաց նոցա երկերները և կատարեց նոցա ցանկութիւնը։

Այսուհետ Մեսրոպի Սահման կաթողիկոսի մահուանից



լետով նստաւ կաթուղիկոսական Աթոռը և վեց սուսից

լետ վախճանեցաւ ու թաղուեցաւ 0շական գիւղում, որ  
Վաղարշապատից մէկ ժամուայ ճանապարհ հեռու է:  
Ս. Մեսրովի գելեզմանի վերալ լետոյ շինուեցաւ եկե-  
ղեցի:

2. Ս. Սահակ Հալրապետը Մեծ Ներախի որդին  
էր. նաքաջ գիտէր լունաց, ասորւոց և պարսից լեզուները,  
առաքինի ու ազգասէր անձն էր. նա մի աղջիկ ունե-  
ցաւ Սահականով անունով, որ մեծ Վարդան Մամիկոն-  
եանի մայրն էր:

Ս. Սահակ իւր կնոջ մահից լետոյ ազգի հաւանու-  
թեամբ Հալրապետական գահը բարձրացաւ. և այդ ժա-  
մանակ մեծ գործեր կատարեց. կարգ և կանոն հաստա-  
տեց, եկեղեցիները պայծառացրեց, շատ եկեղեցիներ և  
վանքեր նորոգեց, նորոգեց ո. Հռիփսիմեանց վկայարանը:  
Իսկ երբ ո. Մեսրովի յայտնեց նորան իւր խորհուրդը  
հայերէն տառերը գտնելու մասին, նա ամեն կերպով  
օգնեց թէ տառերը գտնելու և թէ Սուրբ Գրքի թարգ-  
մանութեան, իր Հալրապետական իրաւունքներով բանա-  
լով ուսումնարաններ Հայաստանի ամեն կողմերը:

Եւ այսպէս նա իւր ամբողջ կեանքը նուիրելով  
ազգի յառաջագիմութեան ու խաղաղութեան և եկեղե-  
ցու պայծառութեան գործին՝ ծերութեան հասակում  
առանձնացաւ Բագրեանդ գաւառի Բլուր գիւղը, ուր  
440 թուին վախճանեցաւ մօտ իննսուն տարեկան հա-  
սակում:

Ս. Սահակի և Ս. Մեսրովի լիշտակը մինչեւ ալսօր

մեծ հանդիսով տօնում է մեր եկեղեցին ո ո ն Սրբոց թարգմանչան չաց անունով:

իդ.

Ա. ԱՏՈՎՄԵԱՆՔ.

Պարսիկ Յազկերտ թագաւորը հալածում էր քրիստոնեաներին. նա մոգերի ու մոգպետների խորհրդով հրաման հանեց, որ իւր տէրութեան ամեն կողմերը քրիստոնէութիւնը ոչնչացնեն և տարածեն իրանց կրօնը —կրակալաշտութիւնը:

Այդ նալատակով հրամիրեց ձօրայ գուռը Հայոց զօրքը, որոնց առաջնորդներն էին Ատովմ Գնունի և Մանաճիկը Ոշտունի նախարարները և խիստ հրամայեց նոյտ, որ կրակին երկրագութիւն տան. այլ և անողորմ տանջանքներով սկսեցին նոյտ չարչարել. բայց նոքա լաւ համարեցին մեռնել Քրիստոսի անուան համար, քան թէ իրանց կրօնը թողնել. այդ պատճառով փախան Հայատան:

Երբ որ Յազկերտը իմացաւ այդ՝ մեծ զօրք ուղարկեց նոյտ ետեկից և պատուիրեց, որ եթէ լետ չը դառնան փախատականները՝ սպանեն նոյտա: Ատովմ և Մանաճիկը նախարարները Անձեւացեաց գաւառի լեռների մէջ ամրացել էին. Պարսիկ զօրքը այնտեղ նոյտ վրայ հասաւ և տեղն ու տեղը նահատակեց :

Դոքա կոչուեցան Ա. տ ո վ մ ե ա ն ք, որոնց լիշտակը մեր սուրբ եկեղեցին կատարում է բուն բարեկենդանից երկու շարաթ առաջ:

۱۰

**Ա. ՂԵԽՈՆԴԵՍՆՔ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՔ.**

1. Սուբբ. Վ. արդան Մամիկոնեանը Սահակ  
Պարթևի թոռն էր: Վարդանը Յունաց Թէոդոս կայսրից  
ստրատելատով թէան պատիւ ստացաւ և պարսիկ-  
ներից էլ մեծ պարզեներ ընդունեց իւր քաջութիւննե-



ըի համար և իւր քաջութեամբ ու առաքինութեամբ  
առաջինը եղաւ հայ նախարարների մէջ:

Ա. Վարդանի ժամանակ Պարսկաստանում թագաւորում էր Յազկերտը: Սա իւր մողերի, մոգպեսների և Միհրներսեհ հազարապետի խորհրդով կամեցաւ կրակապաշտութիւն տարածել իւր հպատակ բոլոր քրիստոնեաների մէջ, որոնց թւում, նաև հայերի մէջ. և այս պատճառով ամեն հնարք գործ էր գնում արդ նպատակին հասնելու համար:

Արդ ժամանակները Պարսից և Յունաց մէջ պատերազմ կար. մոգերը Յազկերտին խորհուրդ տուին, որ Հայոց իշխաններին և նախարարներին իրանց զօրքով օգնութեան հրաւիրէ և յաղթութիւնից լետոյ ստիպէ նոցա, որ արեգակին երկրագութիւն տան: Ուստի Յազկերտը 443 թուին հրովարտակ ուղարկեց իւր հպատակ քրիստոնեաներին, այն է Հայերին, Վարցիներին, Աղուաններին և ուրիշ ազգերին, որ շտապեն օգնութիւն գալ: Եւ որպէս զի Հայերը ոչինչ չը կասկածեն՝ Վասակ նախարարին մարզպանութիւն տուեց, իսկ Վարդանին ընդհանուր սպարապետ կարգեց Հայոց աշխարհին:

Արդ պատերազմի ընթացքում Յազկերտը շարունակ մտածում էր որսալ քրիստոնեալ նախարարներին, իշխաններին և բոլոր մեծամեծներին, երբեմն սիրով, երբեմն սպառնալիքներով և երբեմն արհամարհելով քրիստոնեութիւնը և կրակալաշտութիւնը գովելով. քրիստոնեաները՝ ի հարկէ զարպանում էին նորա դէմ, բայց ոչինչ չէին կարողանում ասել: Երբ Յազկերտը Հոներին յաղթեց, հրամայեց, որ այնուհետև բռնութեամբ տարածեն կրակալաշտութիւնը և վերջ տան քրիստոնէութեան. իսկ ովքեր որ կը համարձակէին ընդդիմանալ՝ բանտարկել

և մահուան պատիժ տալ և նոցա ունեցած-չունեցածը  
արքունի սեպհականութիւն դարձնել:

Սակայն Յագկերտը այս միջոցներով չը կարողացաւ  
հասնել իւր նպատակին, որովհետեւ Յիսուսի անուան  
հաւատացողները աւելի լաւ էին համարում ամեն տե-  
սակ պատիժներ կրել, քան թէ սուրբ Աւետարանի մի  
խօսքը եղծել: Յետոյ նա ուղարկեց Հայոց աշխարհը  
իւր հաւատարիմ ծառաներից մէկին, որի անունը Դեն-  
շապուհ էր, որ զանազան խստութիւններով սկսաւ նե-  
ղացնել ժողովրդին, որպէս զի գուցէ արդպիսով ստիպուեն  
իրանց կրօնը ընդունել. սակայն այդպիսով էլ չհասաւ  
իւր նպատակին:

2. Երբ որ Յագկերտը տեսաւ, որ այս ամենը անելով  
չէ կարողանում Հայերին լազմել, իրըև վերջին զէնք  
իւր չար մտադրութիւնը իրագործելու՝ հրամայեց մո-  
գերին և մոգաբետներին, որ պարսից կրօնի օրէնքները  
առանձին հրովարտակով լայտնեն Հայերին: Այս թղթի  
մէջ պատուիրում էր, որ կամ պատասխանեն իւր գրած-  
ներին և կամ շուտով ներկայանան իրան:

Հայոց Յովսէփ կաթուղիկոսը՝ եպիսկոպոսների և  
իշխանների հետ ժողով կազմելով Արտաշատ քաղաքում՝  
մի առ մի հերքեց պարսից կրօնի օրէնքները, մէջը  
լայտնելով, որ պատրաստ են իրանց կրօնի համար ամեն  
տեսակ տանջանք, նեղութիւն և մահ յանձն առնել: Երբ  
այս պատասխանը կարդացին Յագկերտի առաջ՝ շատերը ծա-  
ծուկ գովում էին Հայերին և զարմանում էին նոցա համար-  
ձակութեան վերայ: Իսկ թագաւորը սաստիկ զարացած՝

Հալոց մեծամեծներին և նախարարներին կանչեց արքունի դուռը:

Զատիկ աւագ շաբաթ օրը, 450 թուին, նոքա հասան Պարսից թագաւորի դուռը և ներկայացան թագաւորին, որ տեսնելով թէ նոքա չեն ուրանում իրանց հաւատը, շատ բարկացաւ և երեք չորս անգամ կըկնում էր ու ասում.

Ձեզ ամենքիտ էլ, որ այստեղ էք, չարաչար կապանքներով դժուարանցանելի տեղերով կաքսորեմ Սագաստան, այնպէս որ ձեզանից շատերը ճանապարհին շողից կը մեռնեն, մնացածներն էլ կընկնեն ամուր բերգերի ու անել բանտերի մէջ. ձեր աշխարհն էլ անթիւ զօրք կուղարկեմ փղերի հետ, ձեր կանանցն ու որդւոց աքսորել կը տամ Խուժաստան, եկեղեցիները, որ վկայարան էք անուանում, կը քանդեմ, կը փլցնեմ ու կ'ոչնչացնեմ. և եթէ մէկը կընդդիմանայ՝ գազանների կոխան լինելով անողորմ կը մեռնի» :

Թագաւորը հրամայեց խիստ հսկողութեան տակ սլահել նոցա:

—

3. Մինչդեռ նախարարները տարակուսութեան մէջ էին՝ թագաւորի ծառաներից մէկը, որ ծածուկ քրիստոնեալ էր, խորհուրդ տուեց նոցա, որ երեսանց կատարեն թագաւորի պատուէրը և արդալիսով թէ իրանց և թէ հալրենիքը նեղութիւններից ազատեն: Այս խորհուրդը ընդունեցին ամենքը և միաբան ձեռքերը դրին ո. Աւետարանի վրայ ու երդուեցին առ ժամանակ ուրացած ձևանալ հալրենիքի և հաւատի փրկութեան

Համար: Թագաւորը երբ լսեց նախարարների այս վճիռը՝  
շատ ուրախացաւ և մեծ պարզեներով ու բազմաթիւ  
զօրքերի և եօթն հարիւրի չափ մոգերի հետ յետդարձեց  
նոցա Հայաստան, պատուիրելով, որ շուտով վերջացնեն  
քրիստոնէութիւնը և կրակալաշտութիւնը հաստատեն:  
Եթեոր այս լուրը հասաւ Հայաստան, տակն ու վրայ  
եղաւ ամբողջ աշխարհը. Հայերը յանդիմանեցին նախա-  
րարների հաւատուրացութիւնը. այդ միջոցին բանակի  
մէջ եղած քահանաները գեսալան ուղարկեցին եպիսկո-  
պոսների ժողովին և յատնեցին ամեն բան:

Իսկոյն ամեն կործից բազմաթիւ կամաւոր զօրքեր հաւա-  
քուեցան վաթսուն հագարի չափ, Քրիստոսի սուրբ հաւատը  
պաշտպանելու համար: Ուխտեցին, որ եզրալը եղբօր,  
հայը որդուն, որդին հօրը, կինը ամուսնուն և ծառան  
տիրոջը չը խնայի և Աստուծոյ օրէնքը թագաւորէ ա-  
մենի սրտում: Այս ուխտը հաստատելուց յետոյ ամենքը  
զինուած պատրաստ էին, երբ պարսից և առ երեսս  
ուրացած Հայոց խումբը մոգերի հետ հասաւ Ծաղկուտն  
գաւառի Անգղ գիւղաքաղաքը և այնտեղ բանակ դրին.  
և երբ մոգպետը ուզում՝ էր եկեղեցու դռները քանդել՝  
ժողովուրդը Ղեռնդ երէցի առաջնորդութեամբ յարձա-  
կուեցան մոգերի ու մոգպետների վերայ և ջարդ տալով  
փախցրին նոցա:

4. Մոգպետը տեսնելով Հայոց հաւատի հաստա-  
տութիւնը՝ համոզուեցաւ, որ անհնար է մոգութիւնը  
տարածել նոցա մէջ, խորհրդակցեց Վասակի հետ, որի  
խորհրդով և զանազան խորտանկ միջոցներով կրակա-  
պաշտութիւնը սկսաւ բուն դնել մի քանի տեղերում:

Վասակը գաղտնի մոգական կրօնն էր պաշտում, իսկ յալտնի խաբում էր Հայերին. նա Յազկերտից աւելի իւր չար խորհրդակիցներով մեծ վնաս հասցըց Հայաստանին:

Երբ Վարդան Մամիկոնեանը տեսաւ Վասակի ուրացութիւնը՝ Ազգի մեծամեծների հետ ժողով կազմեց Շահապիվան քաղաքում, ուր բոլորն էլ միաբերան ուխտեցին հաւատարիմ մնալ Քրիստոսի հաւատին և ձեռքերը սուրբ Աւետարանի վերայ զնելով և համբուրելով Ան, որոշեցին պատերազմել հաւատի համար:

Մի քանի ժամանակից յետով Յազկերտը Միհրներակհազարապետին մեծ զօրքով և բազմաթիւ փղերի հետ ուղարկեց Հայաստան:

Զատկի տօնի օրերին Հայերը լսեցին Պարսից այս պատրաստութիւնները և ամենքին սարսափը տիրեց. առանց ժամանակ կորցնելու խկոյն բոլոր նախարարները վաթսուն և վեց հազար զօրքերով հաւաքուեցան Արտաշատ. և որովհետեւ թշնամիները բանակ էին դրել Արտազ գաւառի Աւարալը գաշտի մէջ Տղմուտ գետի ափին, այդ պատճառով Հայոց զօրախումբն էլ բանակեցաւ այնտեղ:

Վարդանը զօրքը կարգի դնելուց յետոյ՝ խրախուսեց եւ քաջալերեց նախարարներին եւ զօրքերին. որից յետով պատերազմի նախընթաց երեկոյն Ղւանդ երէցը մի ազդու ճառով զինեց ամենքին աներկիւդ պատերազմելու. այդ գիշերը նոքա, ովքեր մկրտուած չէին՝ մկրտուեցան. սեղան կազմուեցաւ, կատարուեցաւ ո. Պատարագի խորհուրդը՝ և Հոգեգալստեան եօթներորդ օրը ամենքը հաղորդուեցան ու արդախով պատրաստուեցան հաւատի պատերազմին:

5. 451 թուին, յունիսի 2-ին, սկսուեցաւ պատերազմը. լաղթութիւնը Հայոց կողմն էր. քաջ Վարդանը առիւծի նման աջ ու ձախ գլորում էր պարսիկներին. բայց յանկարծ մի քանի հարուած ստանալով նահատակուեցաւ և երեկոյեան դէմ վերջացաւ պատերազմը: Հայերի կողմից ընկան 1036 հոգի, իսկ Պարսից կողմից ընկան 3544 հոգի:

Վարդանանց քաջ նահատակների գլխաւորներն էին՝ քաջ Վարդանը, կորովի Խորէնը, արի Արտակը, զարմանալի Տաճատը, իմաստուն Հմայեակը, Հրաշակերտ Ներսեհը, մանուկ Վահանը, արդար Արսէնը, և յառաջադէմ Գարեգինը:

Պատերազմից յետու Հայերը ամրացան բերդերը. թէ-պէտ պարսիկների կողմից էլի փորձեր եղան Հայերի մէջ կրակապաշտութիւն տարածելու, բայց անօգուտ անցան. վերջ ՚ի վերջու Հայերը ազատութեամբ սկսան պաշտել իրանց կրօնը:

Վասակը իւր գործած չարութիւնների պատիժը ստացաւ, նորան մատնեցին զանազան պատիժների և վերջապէս բանտում որդնալից մեռաւ:

Սուրբ Վարդանանց տօնը Հայոց եկեղեցին կատարում է միշտ բուն բարեկենդանի հինգշաբթի օրը:

## ՄԱՍՆ Գ.

Համառօտ ծանօթութիւն սուրբ եկեղեցւոյ շինուածքի, անօթների, զգեստների ու զարդերի և եկեղեցական սուրբ զբքերի մասին:

իլ.

Ա. ԵԿԵՂԵՑԻ ԿԱՄ ՏԱՃԱՐ:

Եկեղեցին է հաւատացեալների ժողովը: Տաճարը Աստծու տունն է, որտեղ հաւաքւում են հաւատացեալ քրիստոնեաները աղօթելու համար:

Տաճարը, որ նոյնական եկեղեցի է կոչում, օրհնուած է և սուրբ մեռնով օծում եպիսկոպոսը և զարդարւում է տէրունական ու սրբերի պատկերներով: Այնտեղ կատարւում են եկեղեցու սուրբ խորհուրդները: Եկեղեցին օծուելիս նուիրւում է ի պատիւ տէրունական որ և է տօնի և կամ որ և է սուրբի:

Բ. ՏԱՃԱՐԻ ԶԵԽԸ:

Հայկական եկեղեցին (տաճարը) երկար ու քառանկիւնի ձեւ ունի, ըստ մեծի մասին խաչաձեւ, որի վերայ հաստատուած է վեղարաձեւ կաթուղիկէն կամ գմբէթը, խակ սորա ծալրին Քրիստոսի սուրբ խաչ:

Եկեղեցւոյ գլխաւոր մուտքը շինուած է նորա արեմտեան կողմը. դա նշանակում է, որ հաւատացեալ չա-

ըից հրաժարւում է և դիմում Քրիստոսին, որ յայտնուեցաւ արևելքում:

Գ. ՏԱ.ՃԱՐԻ ՄԱ.ՍԵՐԸ:

Տաճարը բաժանուում է երեք մասը. ա. գաւիթ, բ. խկական տաճար կամ ատեան և գ. բեմ կամ ամբիոն:

Գ. Ա և ի թ ը մի առանձին շինուածք է տաճարի արևմտեան պատին կից, ուր հին ժամանակ կանգնում էին ներելի մեղքի տէր ապաշխարողները:

Ա տ ե ա ն ը երկու մասից է. առջեր կանգնում են տղամարդիկ, իսկ ետևը կանալք. ատենի առաջին մասում, որ կից է բեմին, կատարւում է աստուածպաշտութիւնը: Ալդտեղ է շինած նաև աւազանը, աջակողմեան որմի մէջ, հաւատացեալներին մկրտելու համար:

Բ ե մ ը մի քանի աստիճաններով բարձրացած է տաճարի արևելեան կողմը, որ վարագուրով բաժանուում է նրանից: Բեմի վերալ լինում է քարոզութիւնը և այնտեղ իրաւունք ունին բարձրանալ միայն աստիճան ունեցող հոգեւորականներ:

Բեմի վերալ գտնուում է ս ե ղ ա ն ը, հաստատուած վէմ քարի վերալ, որ օծում է եպիսկոպոսը և դոքա վերալ կատարուում է սուրբ պատարագի խորհուրդը:

Սեղանի ներսի կողմը հիւսիսալին պատի մէջ գըտնւում է խորհրդական ուղարկուում, որտեղից վերաբերուում է սուրբ խորհուրդը: Բեմը և խորհրդանոցը բաժանուում են խաչկալու որ հաստատուած է սեղանի վերալ:

Սեղանի վերալ դրւում են սուրբ Աւետարանը,

խաչը, միւռոնը, մասնատուվը և տէրունական պատկերներ:

Բեմի երկու կողմերը գտնուում են երկու խորան-ները կամ աւանդատունները, ուր պահուում են եկեղեցւոյ սրբազան անօթներն ու զգեստները:

իթ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆՕԹՆԵՐԻ:

Եկեղեցւոյ զիմանքը անօթները սրանք են. 1. Ակեհ և մաղղմայ, 2. մասնատուփ, 3. բաժակաման, 4. բուրփառ, 5. խաչվառ, 6. քշոց և 7. տապանակ:

1. Սկիհը արծաթեալ ոսկեզօծ սրբազան բաժակէ, որի մէջ սրբագործուում է Քրիստոսի սուրբ արիւնը. իսկ Մաղղմայն արծաթեալ ոսկեզօծ բոլորակ ափսէ է, Քրիստոսի սուրբ մարմինը սրբագործելու համար. Ակեհը և մաղղմայն ծածկուում է բարակ ծածկոցով, որ կոչուում է քօղ:

Ակեհը նշանակուում է Յիսուսի չարչարանքի բաժակը, և այն բաժակը, որից Յիսուս խորհրդական ընթրիքի ժամանակ հաղորդեց առաքեալներին: Իսկ Մաղղմայն նշանակուում է Փրկչի ծննդեան մսուրը և այն գերեզմանը, որի մէջ թաղուեցաւ նորա սուրբ մարմինը:

2. Մասնաւուն փիը արծաթեալ մի փոքրիկ տուփէ, որի մէջ պահուում է սրբագործած մասը Հիւանդներին և բանտարկեալներին հաղորդելու համար:

3. Բաժակամանը արծաթեալ աման է, որի

մէջ պատրաստւում է սուրբ խորհրդի գինին և այնտեղից է ածւում սկզու մէջ:

4. Բուրվառը խունկ ծխելու աման է բոժոժներով զարդարած, որով արքազնագործ հոգևորականները խունկ են ծխում տէրունական և սրբերի պատկերների առաջ և ժողովրդին:

Բուրգառի գործածութիւնը վերցրած է հին ուխտի եկեղեցուց:

5. Խաչվառի գործածութիւնը եկեղեցիներում վերցրած է հետեւեալ գէպքից: Երբ որ մեծ Կոստանդիանոս կայսրը փոքր զօրքով գնում էր թշնամեաց գէմ պատերազմելու՝ կէսօրի ժամանակ օդի մէջ մի լուսեղէն խաչ տեսաւ, որի վերալ գրած էր „սրանով կյաղթես“ և Յիսուսն էլ տեսիլը մէջ երևեցաւ կայսեր ու հրամայեց ս. Խաչի նշանը նկարել տալ բոլոր դրօշների և վահանների վերալ. կայսրը կատարեց և դրանով յաղթեց թշնամուն: Ալդ օրուանից կռապաշտութիւնը ոչնչացաւ և ամեն տեղ փայլեց Քրիստոսի սուրբ Խաչը: Եկեղեցին դորա լիշտակի համար սկսաւ խաչվառի գործածութիւնը հանդէսների ժամանակ:

6. Քշոցը երկայն ձողի վերալ ամրացած արծաթեալ բոլորակ ճոճանակ է բոժոժներով զարդարած, որի երկու երեսին քերովքէների պատկերներ կան նկարած կամ ձուլած: Քշոցը սարկաւագները շարժում են պատարագի ժամանակ:



Քշոցների գործածութիւնը սկսուած է առաքեալների ժամանակից և նշանակում է հրեշտակների հովանաւորութիւնը սուբբ խօսհրդի վերաբ:

7. Տա ալ ան ակը արծաթեալ արկղ է մոմակալով  
և խաչերով զարդարած և գործ է ածուռմ մէջը խունկ  
և կնդրուկ պահելու համար:

Տապանակի գործածութիւնը հին ուխտի տապանակի  
նշանակութիւնը ունի:

Վեհեղեցական զդեստներ եւ պարուեր:

Ա. ՔԱՀԱՆԱՅԻ ԶԳԵՍՏՆԵՐ:

Եկեղեցում ս. պատարագի ժամանակ դորձ են դնում զանազան զգեստներ: Քահանալի զգեստները սոքա են. — սաղաւարտ, շապիկ, փորուրար, գօտի, բազան, վակաս, շուրջառ:

Սադաւարտը նշանակում է Փրկչի կրած փռւշ պսակն ու վարչամակը և գործ է դրւում որպէս հոգեւոր զրահ սատանայի զօրութեան հետ պատերազմելու:

Շա ալ ի կ ը պէտք է լինի սպիտակ և նշանակում  
է հրեշտակի սպիտակ հանդերձը, որ նստած էր Յիսուսի  
գերեզմանի վերայ. նոյնպէս այն հանդերձը, որ Հերով-  
դէսը ծածկեց Յիսուսի վերայ. սպիտակ շապիկը նշան է  
մաքրութեան և անարատութեան:

Փոքուրածը առջևից կախ է ձգւում պարանոցի վերալ և նշանակում է այն ծանր լուծը, որ քահանան առնում է իւր վերալ:

Դօտին նշան է արիութեան և հոգեսրական քաջութեան քահանալական պաշտօնը կատարելու:

Բազալ անները կոչւում են թենոցները և նշանակում են Յիսուսի ձեռքի կապանքները և նշան են բազուկների զօրութեան թշնամու դէմ պատերագմելու:

Վակասը գրւում է ուսերին. սորա գործածութիւնը հին ուստի եկեղեցուց է վերցրած. վակասը նշան է մոլորեալ ոչխարին, որ Յիսուս ուսի վերալ դրեց, այն է մոլորեալ մարդկութեան:

Ծուրջառ երկարն և անթև վերարկու է և նշանակում է Յիսուսի անկար քղամիդը և այն ծիրանին, որ չարչարանքի օրը ձգեցին նորա վերալ:

Բ. ՍԱՐԿԱՒՄԴԻ ԵՒ ԴՊԻՐՆԵՐԻ ԶԳԵՍՏՆԵՐԻ.

Սարկաւագը հագնումէ շալիկ և ձախ ուսին ձգում է ուրար: Կիսասարկաւագը փոխանակ ուրարի կրում է ձախ բազկին բազկուրար. իսկ գալիրները միայն շապիկ են հագնում:

Ծառիկը նշան է սրբութեան և անարատութեան:

Ուրածը հրեշտակի թեերն է նշանակում, որովհետեւ սարկաւագը հրեշտակի պաշտօնն է կատարում: Սարկաւագի ձախ ուսին ուրար ձգելը նշանակում է, որ

նա դեռ կարողութիւն չունի Յիսուսի լուծը ամբողջապէս կրելու:

Բայզ կուրաքը նշանակում է թէ կիսասարկաւագը դեռ ամենևին չի կարող արդ լուծը վերցնել:

Գ. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԳԵՍՑՆԵՐ:

Եպիսկոպոսը բացի քահանայական զգեստներից կրում է նաև. — վոխանակ սաղաւարտի՝ խոլը կամ թագ, եմիփորոն, գաւազան և կոնքեռն:

Թայզը երկփեղեան գլխարկ է. դա վերցրած է հին ուխտի եկեղեցուց և նշանակում է հին և նոր կտակարանների գիտութիւնը:

Եմի փոքրոնը լայն խաչազարդ ուրար է, որ եպիսկոպոսը կրում է շուրջառի վրայից կրծքի և մէջքի վերայ մինչև ոտները:

Դաւազանը ցոյց է տալիս Եշխանական զօրութիւնը:

Եռնը եռն գործ են ածում կաթուգիկոսները և տրում է երեմն արքեպիսկոպոսներին էլ. դա քառանկիւնի խաչաձեւ զարդ է գօտիկից կախած որպէս հոգուական հոգեսոր զէնք և Յիսուսի զենջակի նշանակութիւնը ունի:

լա.

ԵԿԵՊԵՑԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐ:

Աստուածապաշտութիւնը և եկեղեցական սրբազան

Խորհուրդները կատարելու համար գործ են դրւում հետևեալ գըքերը.

1. Սուրբ Աւետարան, որ բովանդակում է իւր մէջ մեր տէր Յիսուս Քրիստոսի տնօրինութիւնները: Սուրբ Աւետարանը գրեցին չորս աւետարանիչներ-Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս:

2. Ժամանակի ըստ պարունակում է իւր մէջ հասարակաց աստուածալաշտութեան ժամերը և բաժանած է օրուայ ժամերի վերաբ:

Հասարակաց աստուածալաշտութեան ժամերը սոքա են. 1. գիշեր ժամու, 2. առաւօտեան, 3. արեւագալի, 4. երրորդ ժամու կամ առաջին ողորմեան, 5. վեցերորդ ժամու կամ երկրորդ ողորմեան, 6. իններորդ ժամու կամ երրորդ ողորմեան. 7. երեկոյեան, 8. խաղաղական, և 9. Հանգստեան կամ եկեսցէն:

Աստուածալաշտութեան կարգը կատարում ենք օրը երկու անգամ, մինչեւ իններորդ ժամու վերջը՝ առաւօտը, իսկ մնացեալը երեկոյեան:

3. Խորհրդադատեանը պարունակում է ս. պատարագի խորհուրդը, որ կատարում է պատարագիչ քահանան:

4. Շաբաթականը բովանդակում է այն բողոք հոգեւոր երգերը, որ երգւում է եկեղեցում աստուածալաշտութեան ժամանակ: Բոլոր շաբականները բաժանուած են ութն ձայնի վերաբ. այդ ութն ձայների եղանակները յօրինեցին մեր սուրբ Մահակ և Մեսրովպ թարգմանիչները:

5. Մաշտոցը այն գիրքն է, որի մէջ գրուած են եկեղեցական խորհուրդների և հոգեւոր ծէսերի կա-

տարելու բոլոր պաշտամունքը: Մաշտոցը կարգի դրեց և  
լրացրեց մեր տառերը հնարող սուրբ Մեսրովի Մաշտոցը  
և նորա անունով էլ կոչւում է Մաշտոց:

6. Ծաշոցը հին և նոր կտակարանի ժողովածու  
է գասաւորուած ամեն օրուալ կարգով: Այդ գրուածքը  
ները կարգացւում են եկեղեցում աստուածալաշտութեան  
ժամանակ: Դորա գործածութիւնը սկսուեցաւ առաջեալ-  
ների ժամանակից:

7. Տօնացոյցը մի հրահանգ է, որ ցոլց է  
տալիս տօները, այլ և այդ տօներին երգուելու երգերը, շա-  
րականները, սաղմոսները, ընթերցուածները և առհա-  
սարակ ամենայն տեսակ հանգիսակատարութիւնները:

Տօնացոլցը շինեցին և. Մեսրովի և Սահակ Հայրա-  
պետները հինգերորդ դրում և հետզհետէ կարգի դրին  
մեր այլ և այլ հայրապետները:

8. Կանոնագիրը այն ժողովածուն է, որի  
մէջ գրուած են երեք տիեզերական, այն է Նիկիափ,  
Կոստանդնուպօլիսի, և Եփեսոսի ժաղովների կանոնները և  
բացի գրանցից նաև Հայաստանեաց եկեղեցական ժողով-  
ների գրած կանոնները եկեղեցւոյ բարեկարգութեան հա-  
մար: Մեր եկեղեցին կառավարում է այդ կանոններով:

9. Յայ և մաւուրը սուրբերի կենսագրու-  
թիւնն է, գրուած նրանց նահատակութեան կամ մահ-  
ուան օրերով, գրա համար էլ կոչւում է յայ և մ—  
աւուր:

Հին ժամանակներում Յայմաւուրքը կարգացւում  
էր եկեղեցիներում, իսկ այժմ միայն վանքերումն են  
կարգում:

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0027197

ЦЕНА

3063

010

6-98